

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պուշկարիոն	հաւար
Տարեկան	12 Թր.
Վեցամսեայ	6 "
Արտասահմանի	
հաւար տարեկան	15 "
Վեցամսեայ	8 "

Աստիկայի	հաւար
Տարեկան	3 ցր.
Վեցամսեայ	4.50 "

Իրանացի սոյր սուս
քին երեսին հաւար 40 ս
լակ վերջին երեսի հա-
ւար 20 սակրիս կ. երե
քին աւելի անգամներու
հաւար 20 0/0 զեղչ կըլ
լայ:

Վառնայի հաւար մ. 10 1/2 10 սակրիս

ՃԱՐՓՈՒՄ

ՈՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂՍՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐ՝ ՏՎՐԱՎՈՒԹՅՈՒՆ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

Նախկին և պրոս գրիկ
Սիլվադրոսիանս հաս-
ցիկն .

Редакция на вѣстникъ
„Шаржумъ“
Варна

Redaction du journal
„Charjourn“
Varna (Bulgarie)

Արտասահմանի հաւար
մեկի (20 ՍԱՆԹԻՄ) (Պուշկարիոյ հաւար
մեկի)
(15 ՍԱՆԹԻՄ)

Գրութիւնք և ս յին տուիր

«ՇԱՐՋՈՒՄ»-Ի ԲԱՃԱՆՈՐԴ ԿՐՈՒՈՂԸ ԲԱՃԱՆԿԻՆԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԻՆ

ԻՉԵՆՔ ԴԵՒԻՄՆԵՒ ԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Պատուելի մը որ «սիէնտաբուր»
յեղափոխական գործիչ է... արտա-
սահմանի մէջ, որ աստուածորանու-
թիւնը կըլլած ըլլալու անբարդաւանդի
առաւելութեամբը սկսած է շատ ին-
չացի մարդու համարը վայելիլ. մի-
ամիտներու քով, այսպէս կ'արտայայ-
տէ, մտնողական շրջանակի մը մէջ
կեանքի մասին իր ունեցած ըմբռնու-
մը, ամբողջ իմաստասիրութիւնը:

—Մեծ իմաստութիւնը ներդաշնա-
կութիւն պահանջուի մէջ է. մտոր իր
մէջ, իր ձգտումներուն, զգացումնե-
րուն և գաղափարներուն մէջ ներ-
դաշնակութիւն պէտք է զնէ, իր
ընտանիքի անդամներուն, իր ազգի և
վերջապէս մարդկութեան անդամնե-
րուն մէջ ներդաշնակութիւն պէտք է
հաստատէ ու պահպանէ, և «այն ար-
տեն երջանիկ կ'ըլլայ»:

Թունու պահպանողականութիւնը և
մանաւանդ ստոր համակրպութիւնը
իր մէջ խտացնող այս խօսքերը երբ
անկղին արտասահմանի ճշմարտութեան
բացարձակ պատգամի ձեւով ու այն
համ զուտ չըլլալով, որու պաղտնիքը
բողոքական պատուելիները միայն
ունին, ինչ սպաւորութիւն չեն ը-
ներ: Երջանիկ ըլլալու ամենագիւ-
րին ճամբան երեք խօսքով դանուած
որուն հանելի չէ. ո՞վ չուզեր բա-
ցարձակ հանգստութիւնը թագաւո-
րած գտնել իր մէջ, հանգարտու-
թիւնը իր ազգին ու մարդկութեան
մէջ, երբ մանաւանդ այդ քանին հա-
մար ո՞չ կ'ուի և ո՞չ արիւն կը պա-
հանջուի:

Ներդաշնակութիւն պահել, ինչ
հրաշալի փնջ. և ա՛լ պիտի դադրին
հակասականութիւնը ձեր բարի ու
չար զգացումներուն. գաղափարնե-
րուն մէջ. ա՛լ պիտի վերանա խոտ-
վութիւնները, անհամաձայնութիւն-
ները ընտանեկան յարկերէն, և որ
աւելի հրաշալի է, ազգի մէջ երկ-
պասակութիւնն ու թշուառութիւնը.
մարդկութեան մէջ շահու կոխը, մը-
ցումն ու թշնամութիւնը գոյութիւն
պիտի չունենան:

Մտքով ըմբռնուած շատ բաներ
կրնան խիստ տրամաբանական երե-
ւիլ, կամ բազմալի ըլլալ, սակայն
իրականութեան մէջ անտնք ինչպէս
են. խնդիրն հոն է, եթէ մեր մէջ
գաղափարի, ձգտումներու, զգացում-
ներու հակասականամարտութիւնները
չըլլան, եթէ ամէն մարդ իրեն ըն-
տանիքի, ազգի և մարդկութեան
անդամ իր նմաններուն հետ նոյն

չահերը, նոյն կ'արծիքները. նոյն հա-
մադուսները՝ ունենայ, մէկ խօսքով
եթէ ներդաշնակութիւնը տիրէ ամէն
տեղ և ամէն բանի մէջ, «յո՛, ցաւը
կը վերնայ այնպէս, պայքարը կը
զարդի տառապանքը գոյութիւն չու-
նենար, բայց այս անիծուած հոգա-
գնտիս վրայ, աստուածաբան պատ-
ուելի, մենք ցաւով կը ծնինք, պայ-
քարով կ'ապրինք և ձեր երազած ու
մեզ ցոյցբրած ելջանկութիւնը որ ամէն
բանի ներդաշնակութիւնն կը ծնի
կըսէք և որով մեզ շրջանիկ կ'ուզէք,
մենք անզիկ աշխարհքին մէջ, ար-
քայութիւն ըսուած անզը պիտի վա-
յելնէք:

Մեղք որ մարդկութեան մէջ ներ-
դաշնակութիւնը գոյութիւն չունի,
կեանքի պայմաններու համաձայն ըն-
տանիքի ձեւը և ազգերու կազմը կը
փոխուի, ու ընկերական հարցը, ապ-
րելու պայքարը, որ անշուշտ ներ-
դաշնակութիւն չնշանակեր, եղեր է
ու պիտի ըլլայ սկիզբի մարդէն մինչև
վերջին մարդը:

Իր նախնական վիճակին մէջ երբ
այդ մարդը օգնականի պէտք ունէր
և կ'իյնէ իրեն խելացի բնուակիր ա-
նասուն մը իր որսորդութեան մէջ կը
գործածէր, ատեն մը ուր ապրելու
դժուորութիւնը զաւելին թոյլ կու-
տար որ իր սրբար հայրը մորթէ և
ուտէ, զայն ուրիշին կեր չընելու,
անոր ծերութեան ինտայելու համար,
կարելի չէր որ նոյն ընտանեկան կազ-
մը գոյութիւն ունենար, ինչ որ ներ-
կայ պայմանները թոյլ կուտան: Ա-
տեն մը երբ մարդիկ իրարու ջով
կուգային զուտ սկստապինս ըմբռ-
նումով, իրենց որսորդութեան անզը,
ապրելու միջավայրը բարիներու զէմ
պահպանելու համար անկարելի էր
որ նոյն ցեղային զգացումները և
կազմակերպութիւն ունենային, ինչ
որ ա.ս օրուան ազգերը ունին:

Մարդիկ սակայն տրուած պայման-
ներուն համաձայնած ու ներդաշնակ
միացած չեն. անտնք միշտ դժգոհա-
ցած են իրենց վիճակէն, պայքարած
ու կուտած, զոնուած ու արիւն թա-
փած են եղած կարգը խանգարելու,
հինը տապալելու և նորը կանգնելու
համար, Այդ միջոցաւ միայն կրցած
են հետզհետէ կատարելագործուիլ,
զարգանալ, քաղաքակրթութիւն, ներ-
դաշնակութիւնը մաս է, սիրող պայ-
մաններու, եղած կարգ ու արգիւն,
թագաւորող անիրաւութեան ու ճն-
շող բանութեան համակերպիլ, զա-
նոնք անմուռնջ տանիլ, անփոփոխ
պահել, յաստատելութիւնը կասեց-
նել, կեցնել ըսիլ է:

Իրտուած բացարձակ իրողութիւն
մըն է որ ինչպէս ցորենը կը ծըլի
հատիկին քայքայումով այնպէս ալ
տնտեսական, քաղաքական, բնկե-
րական ու գաղափարական ամէն յե-
ղաշրջում հինին քայքայումովը ան-
զի կուեննայ:

Անվիճելիօրէն հաստատուած է թէ
նոր գաղափարի, նոր ըմբռնումի տէր
եղած է միշտ մարդկութեան փոք-
րամասնութիւնը, երբեմն մէկ քանի
հոգին միայն, որանցմէ միշտ խրոչած
է հինին փարոզ մեծամասնութիւնը,
կոյր ու հզօր ամբողջ որ անգիտակ-
ցօրէն, բնագործն նորին զէմ կ'ուի
արդարութիւնն ու ճշմարտութիւնը
իտաւրի տակ ծածկած է, ինչպէս
հողը ցորենին հատիկը. որ սակայն
ստաջին նպատակաւ առիւն նորին
երեւան կ'ընէ, այս անգամ ծըլած
ու բողբոջած և հողը կը կանանչա-
զարգէ, զայնը կարգաւարտէ:

Յաստատելութիւնը պայքար,
կեանքը կուի է և ո՞չ թէ ներդաշնա-
կութիւն. ի դ՛ուր նորութեան հար-
սափող պահպանողականները համա-
կերպութիւն, ներդաշնակութիւն կը
ճըւան: Ոչ թէ մէկ, ալ հազարա-
ուր պատուելիներ հարաբար ձայ-
ներով եթէ սրուան, եղած պայման-
ներուն համակերպեցէք, ներդաշնա-
կութիւն պահեցէք, ստակ չըներ,
կեանքը չիենար, կը քալէ իր ան-
փոփոխ, յաւիտենական օրէնքներով:
Յաստատելութեան ամէն ձգտում,
բարեկաւութեան ամէն բաղձանք
պահանջ համակերպական խօսքեր
են. իրնար մարդ շափ կասեցնել կեան-
քի պայմաններու յաստատուած այն
չարժուած որ իր էն բունն ու սուր
կերպարանքին մէջ «յեղափոխութիւն»
կը կոչուի:

Կրնայ հայ գիւղացին համակերպել
և ներդաշնակութիւն պահել քիւր-
տին հետ որ իր աշխատութեան ար-
դիւնքը կը խէ. զինքը կը խոշտան-
գէ. իր կինն ու աղջիկը կ'առանգէ.
կրնայ բարեկամ ըլլալ ու սիրով ապ-
րիլ թուրքին հետ որ զինքը գերի և
ստրուկ բրած է, իր զգացումներուն
ու գաղափարներուն մէջ զինքը ճնշած
է և այ՛օր իր ֆիզիքական գոյու-
թեանն ալ կ'սպաննայ:

Ո՛չ, երբ ժողովուրդը մը իր վիճակի
գիտակցութիւնը կուեննայ կաշիկին
վրայ զգայով ցաւին ստակութիւնը,
անկարելի է որ համարէ, համակեր-
պի:

Մեր մէջ ու մեզմէ գործ ներդաշ-
նակութիւն պահելու անտեղի յոր-
դորները չեն նմանիր անկ կերտիք
պորնոգին միւս երեսը զարձար. սուր

անողը սուրով պիտի ինչոյն իմաս-
տով հարեայ քարոզներուն, որոնք
թուրք բանակալութեան աւելի ծանր
ճնշած են մեր վրայ ու դարաւոր մա-
հաբեր քունով քնացուցած են մեզ:
Պատուելին խօսքերը ձեռով միայն
կը սարբերին աւետարանի բարոյա-
կանք սխալ մեկնող ազէս կղերական-
ներու վնասակար քարոզներէն, և
անոնցմէ անով միայն աւելի պզգալի
են որ այդ համակերպական, պ. հ.
պանողական յորդորները այսօր յե-
ղափոխութեան անունով և այդ դի-
մակի տակ հրապարակ կը դրուին:

Պատուելի մը որ իր յեղափոխական
գործիչ Ամելիկայէն մինչև հոս սուօք
փառք կը շրջի, իր այդ գաղափա-
րով մամոնայի գերիներուն, մեր
պահպանողական հարուստներուն
զգացմանց ճշմարիտ թարգմանք կը
ներկայանայ: Մեր ջոջերը թող պինդ
փարին այդ նորօրինակ յեղափոխա-
կանին որ այնքան վարպետ է. ամե-
նուն յարմարելու, ամենուն հետ
ներդաշնակութիւն պահելու համար:
Սակայն եթէ չեն համոզուիր, գոնէ
իմաստ թող ըլլան որ, պահպանու-
ղականութիւնը ստեղծող ուժ չէ,
համակերպութեամբ ու ներդաշնա-
կութեամբ չէ որ մեր վիճակը պիտի
լուանայ: Անոնք որ կեանքի անի-
րաւ պայմաններու շնամակերպիլ
ու խտած են, նորը կանգնելու համար
հինը քանդելու դժուար գործը
ստանձնած են, ներդաշնակութիւնը
պիտի խզին, վատարար համբերելու
և համակերպելու տեղ պիտի հարուա-
ծեն ինչ որ անիրաւ, անարդար և
վնասակար է:

8 յունուար 1903
Ֆիլիպէ

ՍԵՄԻՆ ԱՌՁԵՒ (*)

Ի. Օ. ԹՈՒՐԿԵՆԵՑԻՆ
Առ Օրիորդ Պ. Պ. Եսան

Առջեւս հազարն չէնք մը. ծա-
կատի կողմը բաց նեղ դուռ մը.
դրան. ետեւը անթափանցելի մա-
սախուղ:

(*) Ռոս աւանդութեան համաձայն
Թուրքիէնէքին սյ. արձակ բանաստեղ-
ծութիւնը նուիրուած է Սօֆիա Բե-
րդիսիանիին, անմասն իր հոտակիր
բարձր արժարժումով, որուն բոցէն
սուսական կաշա բանաստեղծութիւնը կը
հայէր:

Այս հերոսուհիի կենսագրութիւնը
սեւ Շարժումի վերջին թիւերուն մէջ.
Իրանորիւն Թարգմանիչին

Բարձր սեմին առջեւ կրկենայ
աղջիկ մը... ուսուցչիկ մը

Յուրաք կը փչէ թանձր խառ-
րին մէջէն, ու պաղ հոտանքը
խուլ կայծեր կը բերէ շէնքի խո-
ր՛րէն:

«Այս սեմը անցնիլ կուզեմ,
գիտե՞ս, ի՞նչ կ'ստղծես ներսը
քեզ»:

— Գիտեմ, կը պատասխանէ
աղջիկը:

«Յուրաք, քաղց, արհամա-
րանք, հեգնութիւն, ատելութիւն,
նախատինք, բանտ, հիւանդու-
թիւն, մահ անգամ»:

— Գիտեմ:

«Նախնայնութիւն, լքում...»

— Գիտեմ... յօժարակամ պիտի
կրեմ ամեն անշանք, ամեն հար-
ուած:

«Ոչ միայն թշնամիներէդ, այլ
ազգականներէդ ալ, բարեկամ-
ներէդ ալ»:

— Այո, անոնցմէ ալ:

«Լաւ, պատրաստ ե՞ս զոհոյու-
թեան»:

— Այո:

«Անյիշատակ զոհոյութիւննե՞-
րու ալ, Գու պիտի մեռնիս,—
ու ոչ ոք... ոչ ոք պիտի գիտնայ,
որ քու յիշատակը յարգէ»:

— Պէտք չունիմ ոչ երախտա-
գիտութեան, ոչ կարեկցութեան,
ոչ ալ համբաւի:

«Պատրաստ ես ոճրագործու-
թեան ալ»:

Աղջիկը գլուխը ծռեց:

— Ոճրագործութեան ալ...

Չայնը վայրկեանին չը շարու-
նակեց հարցումները:

«Գիտե՞ս, սկսաւ վերջապէս,
ըրածիք վրայ պիտի զղջաս, շատ
ուչ պիտի հասկնաս թէ խաբուած
ու մատաղ կեանքդ ընդունայն
չոհած ես»:

— Ասիկայ ալ գիտեմ: Բայց
պարծեալ կուզեմ ներս մտնալ:

«Մտիր ուրեմն»:

Աղջիկը սեմէն ներս մտաւ և
ծանր վարագոյրը ետեւէն ձգ-
ուեցաւ:

«Նմի՛րա», մրմուռաց մէկը ետե-
ւէն:

«Սո՛ւրբ», լսուեցաւ ձայն մը
հեռուէն:

Ռուսերէնէ քարգա՛րուած

ՎԱՏԵՐԸ ԴՈՒՐՍ

Ա՛լ ատենն է որ Արփիար է-
ֆէնտիի ձագուկներուն հրապա-
րակաւ զարնենք ապտակը: Մին-
չեւ հիմա փափկանկատութիւնը,
յեղափոխական պատիւի նախան-
ձախնդրութիւնը արգիլեց մեզ
հրապարակաւ պարզել այդ վա-
տերու օյինպազուութիւնները:
Բայց գիմացնիս ունինք անանկ
արարածներ՝ որոնք մեր այլ լը-
սութեանն օգտուելով նոր որո-

պայթներու, նոր-նոր էնթրիք-
ներու կը դիմեն ժողովուրդը
խաբիւր համար:

Հնչակեան միութեան վրայէն
ստուեր մըն է որ կանցնի, հըն-
չակեան միութիւնը պիտի մնայ,
յայտատութիւն կրնան կազմել
անհասներ— հին հնչակեանները
ըսել կուզեն— ուրեմն ի՞նչ կո-
կորդիտի արդունքներ կը թա-
փեն «նարժում» ու «Հայրենի-
ք»ը:

Լրբարար ասանկ կըսէր տակա-
ւին տխրահոգ շաղը անցեալները:
Թրքացած թերթին մէջ «Եւ այն-
քան իրողութիւններէն ետքը ան
այլ յիմարարար հրատարակած էր:

Բայց ալ աս ամէնը, սյուքան
գէպքերէն ետքը, լրբութեան,
անդէի, շատ անգիլի ծայրն է:

Ահա՛ թէ ի՞նչու իրբեւ ան-
կեղծ հին հնչակեան Արփիարի
ձագուկներուն աս վերջին ապո-
տուութիւններէն ետքը իմ կազ-
մած անխախտ համապայման հը-
րապարակաւ յայտնել պարտք
կըզգամ:

Հնչակեան արկու հատուածի
կեդրոններու մէջ կայացած հա-
մաձայնութենէն և միութեան
յայտարարութենէն ետքը, մենք,
հեռուն գտնուող անկեղծ հնչակ-
եաններս, բարեմտութիւնը ու-
նեցանք վայրկեան մը յօստալու
թէ՛ հակայեղափոխական «Մար-
տի» նոր կեանքի տխրալի
անցեալը, ինկած մարդուն—
Արփիարի— թափած թոյնը ան-
հետացած է և ամէն հնչակեան
պիտի բոլորուի յեղափոխական
գործին շարժը, պիտի վառնան ին
վատերը, պիտի մաքրուին հըն-
չակեան շարքերը...:

Մեր այդ բոլոր բարի յայտերը
պատրանք է եղեր: Գիմացնիս
լաւ չը ճանչնալու սխալի մէջ
ենք ինկեր:

Յեղափոխական գործին տեսա-
կէտով մեր և անոնց սկզբունքի,
ըմբռնութի տարբերութիւնը ա-
ռաջին օրէն բաղխեցան: Ետէն
խօսքի մարդիկը, շառլթան-
ները, Գաղթեալի էֆէնտիները
զտանք գիմացնիս, որոնք ա-
տոնցմով կուզէին միայն ժողո-
վուրդին աչքը գոցել և քսակը
բանալ տալ, և ինչ բանի համար
— «սինսիլէոզ» ապրելու համար...:

Տեսանք որ «նոր կեանք» և
«Մարտի» տխրալի անցեալին
վրայ առանց բառ մը իսկ ըսե-
լու, շարունակեցին ատ անու-
նին տակ գրել...:

Տեսանք որ երկկի խաբեա-
ները, սրիկաները, դաւաճան-
ները, լրտեսները, մատնիչները,
հակայեղափոխական թրքացած
մարդիկները որոնք գործիչ (չ)
անունն ալ կը կրեն, նորէն ա-
ռին հնչակեան շարքերուն մէջ,
աւելի լաւ տեղ շինեցին անոնց,
խնամբական պաշտօններ ստեղ-

ծեցին, որոնց միակ ճարպիկու-
թիւնը քոյր կուսակցութեան դէմ
աղտոտ պայքար և եղբայրասպան
կախ ստեղծելուն մէջ կը կայա-
նայ:

Տեսանք որ յեղափոխութիւնը
դրամատէր բուրժուաներու կա-
մայականութեան յանձնելու և ա-
նոր փոխարէն դրամ կորզելու
չէր շիական ստորնութիւնն ալ
յանձն առնելու տրամադրութիւն
ունեցողներ կային, եթէ յաջո-
ղէ՛ր սակայն... փորձը հոս, մի-
լիպէի մէջ զլըւ...:

Տեսանք որ գիրքերը քննագա-
տող կամ ուրիշ կուսակցութեան
պատկանող յեղ- եղբայրները
մատնելու, զրպարակելու, վար-
կարեկելու և անոնց պատիւը ա-
րատաւորելու դաւաճանական քոյ-
լերն ալ ըրին: Սոսր ալ օրինակ
միլիպէի վատերը ասին:

Տեսանք որ մէկ կողմէ քողական
ձեւերով յեղափոխութիւնը դար-
բութիւն սրբութեանց կը կոչեն
միւս կողմէ մատնիչութիւնը,
դաւաճանութիւնը փառաւորա-
պէս կը հռչակեն յեղափոխ-
կան գաղափարին հետ:

Մենք այսօր մեր դէմ ունինք
միեւնոյն 96ի պատակաւորները,
միեւնոյն տխրահոգ անհոգ և դա-
ւաճանները, այն տարբերու-
թեամբ որ առաջինները Արփի-
ար և ընկերութիւնն էր, այսօր
անոր ձագուկները— մատնիչ հա-
րիմաններ, լրտես Արզուեան-
ներ, Տխրահոգ Զիթեաններ,
Դաւաճան Գեղամներ, գող և կո-
ղոպտիչ Գրիգորեաններ, Շիլիթ
տեխնիկութիւն տաւափախաւ: Մ-
ներ, որոնց դաւաճանական քալ-
երը, օյինպազուութիւնները ան-
տանելի են այլեւս:

Ալ պէտք է տխրահոգ պատ-
ուելի Զիթեանի համբաւուրը
«Մարտագործութեան» իր և իրեն-
ներուն վրայ գործադրել:

96ի պատակաւորները ետքը այ-
սօր շարք մը զոհոյութիւններով
ձեռք բերուած միութիւնը ոչ թէ
կը փորձեն պատակտել, այլ ա-
ղէն պառ կտած են:— Նոր կեդ-
րոն «Շահրումանեան» նոր հաս-
ցէ, Զիթեան տան աճունք, նոր
անուն, կեղծ Հնչակ Չօպանեան
խմբագրատունէն կեղծ կնիք,
եւն, եւն:

Առ էակպիղներու ըրածնե-
րու մէկ պղտիկ մասը միայն
պատմուած էր «Շարժում»ի մէջ
հրատարակուած հնչ. կեդրոնի
հին հատուածի մեր ընկերնե-
րուն հանածը: Առ այժմ ատալ
կը բաւէ:

Այս ամէնը ոչ երազ, ոչ ալ
ստուեր է, այլ իրողութիւն:

Այո, զանազան տխրահոգ
պատուելիներ, մատնիչ Շահրի-
մաններ պատակտելով կուսակցու-
թիւնը, չեղբայրացնելով անոր կա-
րեւոր գործօն և անկեղծ մասը,

կուղեն իրենց վտանգուած շա-
հերը վերահաստատել որոնք կր-
նային խախտուիլ միութեան տե-
ւականութեամբ, քանի որ ան ի-
րենց ուղածին պէս չեղան... չէ՞
որ պէտք է ծծեն երեկի «ստիպա-
հաճաւած խեղճ ժողովուրդին
արիւնը... Առ աս ամէնը գիտնա-
լով լռիլ ոճրագործութիւն մըն
է պարզապէս և մեծ սխալ մը ա-
մէն բան կեդրոնի տեղափոխու-
միւս վրայ թողուլը:

Չէ՛ տանկտերի է, ինչ հա-
կառակը մեր բոլոր մարմինները
ու ընկերները համահաստատ ու-
ժով և միատեսակ թափով պէտք
է հրապարակ նետալինք, հրա-
պարակը յեղափոխական վտանգ և
մաքուր ալեւնք, մաքրենք նաև
կուսակցութիւնը այն վտանգէն
սորոնք թորքէն շատ աւելի վատ-
թար են և մեր դատի ամենավը-
նասակար թշնամիները, ծղտնալ
պայլել որ միայն հարկը հապա-
րուոր գոհերու սուրբ յիշատակը
շահագործելու խաչագործութիւնը
կընեն:

Մեր բոլոր ընկերները պէտք
է զիտնան թէ աս երկրորդ ան-
գամն է որ աս տխուր, շատ տխուր
խաղը կը խաղան կուսակցու-
թեան գլխուն և պէտք է լաւ գիտ-
նանք որ եթէ խայտառակ կեր-
պով դուրս չի վառնենք ատ վա-
տերը, կասկածելի կը լինի թէ
հայ յեղ. ընդհանուր եղբայրակ-
ցութեան միտքը եւ թէ մեր ընդ-
հանուր նպատակի յաղթանակը:

Եւ միթիւրական է որ աս ս-
ղին քայլերը առնուած է արդէն:
Լոնտոնի հնչակեան մասնաձեւը,
մատնիչ Շահրիման և ընկերները
այլ եւս չի ճանչնար ոչ ընկեր
ոչ ալ կեդրոնի անգամ: Իոյն
բանը կընեն Ամբրիկայի հնչակ-
եաններէն սմանք: Իոյնը ըրած
է նաև միլիպէի հնչակեան մաս-
նաձեւը վառնելով իր մէջէն
չվալիէ տեխնիկութիւնները, հա-
կայեղափոխական հայ թիւրքերը
ոճանթանի ինկած փորուելիս
ըրո՞:

Այո, մենք վառնեցինք վատե-
րը զսուրս, և կը յուսանք ասով
լաւ օրինակ մը եղած ըլլար մեր
բոլոր յեղափոխական և հնչակ-
եան ընկերներուն որպէս չի մեր
օրինակին հետեւին անոնք ալ և
պէտք է որ հետեւին, որ միան-
գամ ընդմիջու վերջ տրուի այս
խայտառակ գրութեան:

Ինչ հնչակեանն Եղան
Յ. Ա. Վար 9 1903
Ֆիլիպէ

Յ. Գ. Այս անգամ այսպիսի սուր
անգամ եթէ հարկ ըլլայ թէ իրենց
խակական գոյներով հրապարակով
խայտառակելով պիտի ջախջախեմ և
թէ Տօքիոսէնները պիտի խօսեցնեն:
Իոյն

ՍՕՓԻԱ ԲԵՐՈՎԱՐՍ

(Կարգադրութիւն Կարգադրութեան)

(Շար. նախորդ քիւիսի եւ վերջ)

Ս. Բէրովստայնի Կարգադրութեան համապատասխան մէջ... Կարգադրութեան համապատասխան մէջ... Կարգադրութեան համապատասխան մէջ...

Կարգադրութեան համապատասխան մէջ... Կարգադրութեան համապատասխան մէջ... Կարգադրութեան համապատասխան մէջ...

Կարգադրութեան համապատասխան մէջ... Կարգադրութեան համապատասխան մէջ... Կարգադրութեան համապատասխան մէջ...

Կարգադրութեան համապատասխան մէջ... Կարգադրութեան համապատասխան մէջ... Կարգադրութեան համապատասխան մէջ...

Կարգադրութեան համապատասխան մէջ... Կարգադրութեան համապատասխան մէջ... Կարգադրութեան համապատասխան մէջ...

Կարգադրութեան համապատասխան մէջ... Կարգադրութեան համապատասխան մէջ... Կարգադրութեան համապատասխան մէջ...

Պաշտօնատեղի Կարգադրութեան

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊԱՐԿԱՅԱՅՈՅ ԿԵԴՐՈՒՄԻ ԶՈՒՂՁ

(Շար. նախորդ քիւիսի եւ վերջ)

Անցողիկ կերպով ըստնք... Կարգադրութեան համապատասխան մէջ... Կարգադրութեան համապատասխան մէջ...

Կարգադրութեան համապատասխան մէջ... Կարգադրութեան համապատասխան մէջ... Կարգադրութեան համապատասխան մէջ...

Կարգադրութեան համապատասխան մէջ... Կարգադրութեան համապատասխան մէջ... Կարգադրութեան համապատասխան մէջ...

Կարգադրութեան համապատասխան մէջ... Կարգադրութեան համապատասխան մէջ... Կարգադրութեան համապատասխան մէջ...

Կարգադրութեան համապատասխան մէջ... Կարգադրութեան համապատասխան մէջ... Կարգադրութեան համապատասխան մէջ...

էլեանը . Կեսարիոյ քառանգաւորացը .
Մարգուանի Անատոլ-Գոլթր եւն :

Փողովորդական լուսաւորութեան
գործին համար սա անհրաժեշտ պէտք
է : Փողովորդական Չուրիցիոյ իւրաքանչ-
իւր Կանտոնը ունի իր մէկ կամ եր-
կու վարժապետանոցը . անոր համար
է որ զուրիցիացի հովիւր անպատ-
կարգաւ . գրել եւ հաշուել գիտէ :
Ժամանակ է որ մենք ալ լիջորէն
խորհինք այս մասին :

1904ին կը լրանայ մեր տառերու
դիւտի հազար հինգհարիւրամեակը :
Ինչո՞վ յաւերժացնել այս մեծ յորել-
եանը . Մեր կարծիքով շատ նպա-
տակաւոր մար է բանալ Սահակ-Մես-
րոպեան վարժապետանոց մը . որուն
կարելի է կցել նաեւ որքանոց մը
իրբու փորձի դպրոց :

Սա անկարելի բան չէ , երբ մենք
գործենք հաւաքական ոյժերով . բայց
զուցէ առիթ ներկայանայ մեզ այս
առթիւ մասնաւոր կերպով խօսիլ ,
առ այժմ այսքան :

Մարգարեանի

Վարժապետանոց-Շիրս
Չուրիցիոյ

ՀԱՅԿԱՆ ՅՈՒՑ ԱՀԱՆԴԷՍ



Մեր ձեռնարկութեան նպատա-
կը որ և է քաղաքական հիմուն-
քից միանգամայն զուրկ է : Մենք
կամինք Գերմանիոյ մայրաքա-
ղաքում հայ ազգի անցեալ և
ներկայ կուլտուրան , նորա նիւ-
թական և հոգեւոր արգասեաց
ընդհանուր պատկերը գերմանա-
կան հասարակութեանն ներկա-
յացնել : Մեր ցանկութիւնն է՝
գրգել գերմանական գիտութիւնն
աւելի մեծ աջողութեամբ , քան
մինչեւ այժմ , ուսումնասիրել հայ
լեզուն և պատմութիւնն և աւելի
պարզ պատկերացնել մեզ հայ ազ-
գութիւնն : Ձեր ազգութեանն
խաղաղ կերպով ծառայել՝ այ-
սինքն Հայաստանի և հայերի
մասին լոկ ճշմարտութիւնն հան-
գէտ դնել՝ մեր միակ ցանկու-
թիւնն է : Թէ Ձեր ազգը մի խա-
ղաղ հոգեւորապէս զարգացած է
վերին աստիճանի կուլտուրայի
ընդունակ ժողովուրդ է՝ յոգուտ
դորա գերմանացի և եւրոպական
հասարակութեան առջեւ համո-
ղեցուցիչ ապացոյցներ են բե-
րելու նորա աշխատանքի պտուղ-
ները և նորա հոգեւոր կեանքի
արգասիքը . հայ պատմութեան
սկզբից մինչեւ մեր ներկան :

Յուցահանդէսի ծրագիրը հե-
տեւեալ բաժանմունքներէ կը
բաղկանայ՝

1. ԵՐԿՐԻ ԲԵՐՔԸ

- ա) Հանքեր և մետաղներ . 1)
- նափտայ . 2)
- Բամբակ . 3)
- Բուրդ . 4)
- Մետաքս . 5)
- Գինի և այլ խր-
միչք . 6)
- Չոր միրգ . 7)
- Կաթնա-
յին տնտեսութիւն . 8)
- Չկնէպէն :

2. ՍՐՈՒԵՍ ԵՒ ՁԵՆՍԻՄ

- ա) Գեղակար . 1)
- Ոստայնան
կութիւն (կապիւրտներ և այլն) .

5) Ոսկերչութիւն :

3. ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՀԱՅԿ. ԳԵՂԱՐՈՒԵՍ

- ա) Ճարտարապետութիւն և
արձանագործութիւն . 1)
- Մուշակ-
չ) Կարճութիւն :

4. ԱԶԳԱՅՐՈՒԹԻՒՆ

- ա) Փողովորդի կեանքը , դոր-
ծունէութիւնն , բնակարանն . 1)
- Չգեսար . 2)
- Հոգեւոր կեանքը՝
հեքեաթներ , վէպեր , երգեր և
այլն :

5. ՀԱՅ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐ

- ա) Դրամներ . 1)
- Կիւրքներ և
այլն :

6. ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՄՍՄՈՒԼ

7. ՀԱՅԿԱՆ ԹԱՏՐՈՆ (ԲՈՒԹՅՈՒՆ)

Հայկական ցուցահանդէսի կո-
միտէն պատիւ ունի Ձեր յարգելի
թերթի աջակցութիւնն խոնար-
հաբար խնդրելու . մեր ձեռնար-
կութիւնն լինելով համահայկա-
կան , յոյս ունինք , որ Բուլղա-
րիոյ հայերը անտարբեր մնալու
չեն դէպի այդ խաղաղ , իւր բա-
րոյական նշանակութեամբ ար-
գիւնաւոր ցոյցը : Կոմիտէն մե-
ծապէս շնորհակալ կը լինէր ձե-
զանից , մեծապատիւ պարոն ,
եթէ դուք բարեհաճէիք յոգուտ-
ներով Բուլղարիոյ հայերի ու-
շադրութիւնն առ համահայկա-
կան ցուցահանդէսն՝ արթեցնել
Յուցահանդէսը ապա փոխադր-
ւելու է Պարիս , Լոնտոն և Ամս-
թերկա :

Մեր ուղերձն կը խնդրենք
արտասպել , ձեր թերթի այդ օ-
րինակն մեզ յղել :

Խորին յարգանք

Յուցահանդէսի կոմիտէ :

Նամականի և այլն յղելու է՝ Պի-
լին Շարլոտիկոյուրի , Sr. Պ. Սալա-
դիան , Բուլղար . 94

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Պատրիարքին վրայ փորձ ընող
երիտասարդը յայտարարած է որ
ինք անձնական վրէժ ունէր պատ-
րիարքին հետ . թէ կառավարու-
թիւնը և թէ պատրիարքը նոյն-
պէս կընդունին Խաչիկ Յակոբ-
եանին այդ յայտարարութիւնը ,
սակայն ինչպէս կերելի կուռ-
վարութիւնը ներշնչուտ այլ կերպ
համոզուած է : Կրտսէն որ զիւ
գնտակը հանուած չէ , և պատ-
րիարքին վրէժ կը ծանր է :

Ձերբակալութիւններ տեղի ու-
նեցնու են . մեծ մասամբ գաւա-
ռացիներու մէջ . Պատրիարքա-
րանի շուրջը մեծ հակողութիւն
կայ . ցոյց է կը վախցուի :

— Հնչակեաններուն կրկին
պատկտուած ալ ևս իրողութիւ-
նը է ինչպէս կը տեսնուի Յիլի-
պէի մասնաճիւղին պաշտօնական
յայտարարութեանն : Հին Հնչակ-

եանները անգառնալի կերպով
որոշած են ճահրիմանեաններու
և Ձիթեաններու հետ գործ
չունենալ :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Երոպական թերթերը կը հա-
զորգեն որ Թուրքիոյ պատերազ-
մի կը պատրաստուի , մէկ կողմէն
Մակեդոնիոյ մէջ սուտ բարենո-
րոգումներ մտցնել ձեւացնելով :
Տամատ Մահմուտ փաշան մե-
սեր է Պրուքսէլի մէջ . Սուլթանը
անոր զակններուն դիմեր է որ
գիւրկը Պոլիս շրջուի կայսերական
գամբարանին մէջ թաղուելու հա-
մար : Տամատին տղաքները չեն
համաձայնեց :

ՌՈՒՍԻԱ

Ոտէսայի բաւտիճմէջ խոռոմու-
թիւններ տնդի ունեցեր են եր-
կու օր շարունակ . այրերու և
կիներու բաժնին մէջ : Բանտին
վարչութիւնը ստիպուել է զօրք
օգնութեան կանչել , որովհետեւ
բանտին պահապանները ապս-
տամբները զսպելու անկարող
գտնուել են : Խոռոմութեան պատ-
ճառը գեռ յայտնի չէ :

Վ Է Ն Է Ց Ո Ւ Է Լ Ա

Անգլիա և Իտալիա կը հակա-
ռակին պաշարումը շարունակե-
լուն , երբ Ուաշինկթընի մէջ
հաշտութեան բանակցութիւննե-
րը սկսին , այս երկու պետու-
թիւնները պիտի խնդրեն Գեր-
մանիայէն որ ետ կանչէ իր տոր-
միզը :

— Ամերիկայի հանրային կար-
ծիքը շատ դէժ է Գերմանիոյ ,
Սան-Բարթոլոմէոսի ռաբակոմ-
ուելուն համար : Կարելի է որ Մի
ացեալ նահանգներու կառավար-
ութիւնը ստիպուի Գերմանիոյ
հարցնել այդ ռաբակոմումի պատ-
ճառը :

Ա Ֆ Ղ Ա Ն Ի Ս Տ Ա Ն

Անգլիական կառավարութիւնը
ծանր լուրեր ընդունած է Աֆղա-
նիստանէն Էմիրին պատերազմա-
կան պատրաստութեանց մասին :

Հ Ր Ս Ժ Ե Շ Տ

Իտալիայի խոստումներու կը մեկ-
նի քաղաքէս : Պուրկուզի ճամբով
դէպի Յիլիպէ . այս առթիւ
պարաք անհրաժեշտ կը համար-
ինք մեր անկեղծ շնորհակալի-
քը յայտնել ըստ անոնց՝ որք
վեհանձնարար հաճեցան ձեռք
կարկառել ազնիւ նպատակի մը

յաջողութեան համար , մեր մի-
միայն իզն ու փափազն է հայ
բեմը բարձրացնել , ընտրել այն-
պիսի հեղինակներու երկեր ու
րոնց անունը անմահ մնացած է
մարդկութեան բարի զարգաց-
մանը աշխատելուն համար , պի-
տի ճգնինք ու աշխատինք յա-
ռաշէկային աւելի փայլուն կեր-
պով : ներկայացնելու Վառնայի
ազնիւ թատերասէր հայ հասա-
լակութեան , որոնց ամէնուն ալ
կը մնանք սնհունա երախտա-
պարտ :

Ի դէմաց «Նաւէժմատ» հայ դե-
րասանական խմբին

Վ. Պապուեւ

Թուուար 15 1903

Վառնա

ՀԱՅ ՄՍՍ ԱՃԱՌԱՆՈՑ

ՀԱՄԱՐՁՈՒՄ ՍՌԱՆԵԱՆԻ

Պալըզ բազար անկիւնի խանու-
թը . թիւ 7

Կը ծախենք կովի , քրքրճըքի
միս , պեր և մասնաւորապէս լաւ տե-
ղեր արածուած կենդանիներ կը
մտրվենք և շարունակ թարմ միս
պատրաստ կը գտնուի մեր խա-
նութը ամէն ժամանակ . Գին
գիւրամտաչելի և ուղիղ կշիռ :

ՅԱՅՍԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հրապարակ ելած նոյնմբեր և
գեղատեմբեր , առանց թուահա-
մարի , «Հնչակեցը» , որոնք
Ա. Գալպարս . 21 Հոկտեմբ Կոստ Բե-
խտիւ Լոնսոն
հասցէն ունին՝ արտաքուսած
հնչակեաներու (Ձիթեան . Շահ-
րիման խմբակի) մէկ նոր կեղ-
ծիքն է :

Ի դիմաց Փիլիպոպոլի Հնչ .
Մասնաճիւղի

ատենադպիր ստենագրատ
Կայծակ Ա . այ

(ՆիՔ)

Մանթա .— Բուն «Հնչակ»-ի հաս-
ցէն է

Մ. Պեղարս 85 Բեխտիւ 85
որ մօտեցուպիտի երեւի :

ՅԱՅՍԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կը խնդրուի մեր բաժանորդ-
ներէն , որոնք գեռ իրենց պարտ-
քերը չեն վճարած , շտապին
մինչեւ փետրովար 1 ը հաշիւին
Տաքրել և զմեզ չ'ստիպել օրին-
քի ուժին դիմելու :

ОТГОВОРНИКЪ

Мурадъ-Ераносянъ

Печатница «Взаимность» Варна